վարդապետն և Մարտիրոս վարդապետն առ իւրեանս կամէին լինել։ Աստուածատուր վարդապետն կամէր ընդ նոսա լինել, արգելոյր զնա և ոչ թողէր աշակերտն նորին Մարտիրոս վարդապետն որ ունէր առ Եղիազարն ուխտ սիրոյ առ միմեանս թէ Եւ եթ զբանս մեր յառաջ տարցուք, զի մի խրոխտասցի ի վերայ մեր ազգն Ցունաց, և միաբանօքս մեք ընդ քեզ եմք։ Վասն որոյ և խօճայքն և չէլէպիքն զարարքս նոցա ոչինչ համարեալ թէ Զի՞նչ եղջիւր բարձրացուցիք այդու. և աղճատէին զվարդապետսն ի դրունս բռնակալաց և առ մեծամեծսն. և ևս զնացին ի գանկատ առ քէհապէկն և առ քեհեա վէզիրին, զի կորուսցեն զմի ի նոցանէ և կամ աքսորեսցեն զո՛ և կամիցին։ Յայնժամ կոչեալ քէհա վէզիրին զԵղիազար վարդապետն և ասէ. Գանկատաւորք կան զքէն, ի՞նչ է աբարմունք քո, զի՞ նեղացուցանես զժողովուրդն. յերէկ էր որ ի մահուանէ ազատեցար, որ ապստամբ առնուն էիր. և ահացուցանէր զնա յոյժ թէ Զքեզ ծանի՛ր։ Եւ նա ի գողման լեալ՝ երկուցեալ եկեալ առ ի խորհուրդ, և ասաց Մարտիրոս վարդապետին եթէ Լե՛ր պատրիարք զի ՀԱՍ ոչ կրեսցուք, բազում ստիպմամբ. թէ՝ Ամենայն անձն մի եմք և թէ դրամ պիտոյանայցէ, որքան ի մէնջ լիցի, թերևս զնոսա այսու սանձեսցուք. զի յոյժ լինէր բազում կռիւն, մինչ յելն Մայիսի ամսոյ զօրհանապազ։ Եւ զնացեալ Մարտիրոս վարդապետն առ քէհա վէզիրին, և որպէս յառաջն էր ՃԽՄ ըստակ դիմոսական հարկն, որ ասի միրի՝ այն խօսիւք և բանիւ առնէր զպատրիարքութիւն յարքունուստ։ Եւ վէզիրն ասէր. Գայցէ առաջի իմ ռայա՝ զի տեսից թէ խնդրեսցե՞ն։ Եւ վասն այսմ բանի և խաղաղանալոյ և վասն միրիին ոմանց գիտելով և ոմանց անգիտութեամբ զնացին ի դրունս վէզիրի և կամիմք ասացին. և ուրախանայր վէզիրն ընդ